ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՎԵՐՈՆԻԿԱ ԽՈՐԱՍԱՆՅԱՆԻՆ ՂՐՂԶՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղված անձ**
   Վերոնիկա Խորասանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ ԿԳՄՍՆ երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետի պարտականությունները կատարող

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Ղրղզստանի Հանրապետություն, Չոլպոն-Ատա, 2022 թվականի օգոստոսի 24-26-ը

4. **Հրավիրող կողմը**
   Ղրղզստանի Հանրապետության մշակույթի, տեղեկատվության, սպորտի և երիտասարդական քաղաքականության նախարարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ԱՊՀ և ԵԱՏՄ երիտասարդական առաջին ֆորումին, 12 հոգուց բաղկացած ՀՀ ազգային երիտասարդական պատվիրակության աշխատանքների համակարգում

6. **Քննարկված թեմաները (հարցերը)**
   ԱՊՀ և ԵԱՏՄ երիտասարդական առաջին ֆորումը տեղի է ունեցել Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին զուգահեռ: Ֆորումն անցկացվել է Չոլպոն-Ատա քաղաքում տեղակայված «Ռուխ Օրդո» մշակութային կենտրոնում: Երիտասարդական ֆորումին մասնակցել են ԵԱՏՄ անդամ պետություններից և ԱՊՀ երկրների շարքից՝ միայն Ուզբեկստանից ավելի քան 200 պատվիրակներ՝ երիտասարդ առաջնորդներ, ուսանողներ, ձեռներեցներ,

պետական ծառայողներ, դիվանագետներ, երիտասարդ ստեղծագործողներ և այլն: Ֆորումի նպատակն է ընդլայնել անդամ պետությունների երիտասարդների միջև համագործակցության շրջանակը, միավորել ակտիվ երիտասարդներին, ինչպես նաև ստեղծել լրացուցիչ հնարավորություններ՝ նոր գաղափարների և նախաձեռնությունների պլանավորման և դրանց իրականացման նպատակով նոր կապերի ստեղծման համար:

Ֆորումի շրջանակներում քննարկումները կազմակերպվել են հետևյալ 4 ուղղություններով՝ «երիտասարդ ձեռներեցներ», «երիտասարդ պետական ծառայողներ», «ստեղծարար երիտասարդներ» ու «կրթություն և հասարակական նախագծեր»: Հայկական պատվիրակությունը մասնակցել է վերոնշյալ բոլոր 4 ուղղություններով կազմակերպվող քննարկումներին, որոնք ներառել են հետևյալ հարցերը՝

- ԱՊՀ և ԵԱՏՄ երիտասարդ առաջնորդներ, երիտասարդական կադրային ռեզերվի ձևավորման հեռանկարները,
- Տնտեսական ինտեգրացման հնարավորությունները ԱՊՀ և ԵԱՏՄ շրջանակներում երիտասարդների ձեռնարկատիրության համար,
- Երիտասարդներ և նորարարություն. հմտություններ, մասնագիտություններ,
- ԱՊՀ շրջանակներում ընդհանուր գիտակրթական միջավայրի զարգացման հեռանկարները,
- ԱՊՀ և ԵԱՏՄ միջավայրում երիտասարդներին միավորող գաղափարներ,
- Ստեղծարար երիտասարդություն,
- ԱՊՀ տարածքում երիտասարդական միջազգային համագործակցության հեռանկարները,
- ԱՊՀ և ԵԱՏՄ շրջանակներում բիզնես աքսելերատորների, վենչուրային հիմնադրամների դերն ու նշանակությունը երիտասարդական ձեռնարկատիրության զարգացման համար:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

ԱՊՀ և ԵԱՏՄ երիտասարդական առաջին ֆորումի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում Ղրղզստանի Հանրապետության մշակույթի, տեղեկատվության, սպորտի և երիտասարդական քաղաքականության նախարար Ազամատ Ժամանկուլովի և նախարարության երիտասարդության ոլորտը համակարգող վարչության պետ Թաալայ Բեկայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երիտասարդության ոլորտում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ընդգծվել է ԱՊՀ-ԵԱՏՄ նոր ձևաչափով ֆորումի՝ որպես ԱՊՀ և ԵԱՏՄ երկրների երիտասարդական կառուցների միջև համագործակցության զարգացման, ինչպես նաև երիտասարդական

քաղաքականության ընդհանրական հարցերի շուրջ երկխոսության զարգացման համար նոր և հետաքրքիր հարթակ դառնալու հանգամանքը:
Ֆորումի շրջանակներում տեղի է ունեցել գործնական նախաճաշ պատվիրակությունների ղեկավարների, երիտասարդների և ԵԱՏՄ երկրների կառավարությունների ղեկավարների տեղակալների մասնակցությամբ: Հանդիպման ժամանակ կառավարությունների ղեկավարների տեղակալներին են ներկայացվել մի շարք առաջարկություններ երիտասարդության ոլորտի վերաբերյալ: ՀՀ պատվիրակության առաջարկը վերաբերել է կրթությանը և մասնագիտական կատարելագործմանը: Առաջարկվել է մասնագիտական կրթության համակարգում ստեղծել առցանց կրթության նոր հարթակներ, մշակել և ներդնել արտադրական պրակտիկաների և փորձնակության ծրագրեր, որոնք ոչ միայն ուսանողների աշխատանքային առաջխաղացման համար, այլև երիտասարդ պետական ծառայողների, երիտասարդ մասնագետների, գիտնականների և դասախոսների համար ժամանակակից և հարմար գործիքներ կլինեն, դիտարկել ԵԱՏՄ շրջանակում ակադեմիական փոխանակման ծրագրերի ստեղծման հնարավորությունը, որը կնպաստեր ԱՊՀ և ԵԱՏՄ միջավայրերում կրթության որակի բարձրացմանը, շարժունակության զարգացմանը և մշակութային կապերի ստեղծմանը:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

-

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Գործուղման արդյունքներով քննարկվել է դիտարկել հետագա տարիներին ԱՊՀ և ԵԱՏՄ երիտասարդական ֆորումի շարունակականության ապահովման հարցերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Օգոստոսի 31, 2022թ.

Վերոնիկա Խորասանյան ----------